

WILCO

Հաստատված է

«Վիլկո» ՍՊԸ

Միակ մասնակից

«Պարադեպլատց Լիմիթեդ» ՍՊԸ

ի դերում «Ալստերիս մենեջմենտ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ստեփան Մակրի կողմից





«26» օգոստոսի 2025թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1.1. «Վիլկո» ՍՊԸ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) գրանցված և լիցենզավորված ներդրումային ընկերություն է:

1.2. Ընկերության վավերապայմաններն են՝

1.2.1. Անվանումը՝ «Վիլկո» ՍՊԸ

1.2.2. Ներդրումային ընկերության լիցենզիա՝ **Համար 0008**

1.2.3. Հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան 0002, Սարյան փ. 26/2**

1.2.4. Կայք՝ **wilco.am**

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Հաճախորդների միջոցների պաշտպանության սույն կանոնակարգում (այսուհետ՝ «Կանոնակարգ») օգտագործվող հասկացությունները, եթե դրանք սահմանված չեն Կանոնակարգում, մեկնաբանվում են այն նշանակությամբ, որը սահմանված է ՀՀ օրենքներում և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում, իսկ վերջիններիս կողմից սահմանված չլինելու դեպքում կիրառվում է միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

2.2. **Ընկերություն**՝ «Վիլկո» ՍՊԸ.

2.3. **Հաճախորդ**՝ ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում Ընկերության կողմից մատուցվում են Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված ծառայությունները.

2.4. **Գործընկեր**՝ անձ՝ ներառյալ առանց սահմանափակման բրոքերներ, պահառուներ, ներդրումային կամ ֆինանսական կազմակերպություններ, որի ներգրավմամբ և/կամ որի միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Ընկերությունը ծառայություններ է մատուցում Հաճախորդին.

2.5. **ՀՀ ԿԲ**՝ Հայաստանի Հանրապետության Կենրոնական Բանկ.

WILCO

2.6. **Տեղեկատվության փոխանակման միջոցներ**՝ Ընկերության և Հաճախորդի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում ամրագրված կապի միջոցներ:

2.7. **Հաճախորդի միջոցներ**՝ Հաճախորդի և Ընկերության միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա Ընկերության տիրապետմանը և/կամ կառավարմանը հանձնված Հաճախորդին պատկանող դրամական միջոցները և/կամ արժեթղթերը, այդ թվում՝ դրանց կառավարման արդյունքում առաջացած շահույթը:

2.8. **Պայմանագիր**՝ Հաճախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որը կարգավորում է կողմերի իրավահարաբերությունները, սահմանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բովանդակում է օրենքով և կողմերի համաձայնությամբ որոշված այլ պայմանները:

2.9. **Կիրառելի օրենսդրություն**՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտեր, ՀՀ ԿԲ կանոնակարգեր ինչպես նաև Կանոնակարգի, Ընկերության ներքին իրավական փաստաթղթերի և համապատասխան Պայմանագրի դրույթներ:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Կանոնակարգը սահմանում է Հաճախորդի կողմից Ընկերությանը հանձնված Միջոցների պաշտպանության կարգը: Միջոցների ընդունումը չի ենթադրում դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում Ընկերությանը:

3.2. Ընկերությունը հանդիսանում է ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպություն և գործում է վերջինիս վերահսկողության ներքո:

3.3. Կանոնակարգը կազմված է և կարգավորվում է Կիրառելի օրենսդրությանը համապատասխան և շրջանակներում:

3.4. Կանոնակարգը հանդիսանում է հրապարակման ենթակա փաստաթուղթ, որը հասանելի է ցանկացած շահագրգիռ կողմի՝ ծանոթանալու նպատակով: Կանոնակարգը տեղադրվում է Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

3.5. Կանոնակարգի յուրաքանչյուր դրույթ մեկնաբանվում է դրա բառացի շարադրանքի հիման վրա: Եթե որևէ դրույթի կոնկրետ շարադրանքը պարունակում է երկիմաստություն, ապա այդ դրույթները մեկնաբանվում են Կանոնակարգի, Պայմանագրի և Ընկերության ներքին իրավական ակտերի ընդհանուր տրամաբանության շրջանակներում:

3.6. Կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Ընկերության կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին ծանուցելու պայմանով: Կանոնակարգի բոլոր փոփոխությունները և լրացումները Կանոնակարգի անբաժանելի մասն են:

4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

WILCO

4.1. Ընկերությունը պարտավորվում է իրականացնել Հաճախորդների Միջոցների անվտանգ պահպանում՝ առաջնորդվելով թափանցիկության, բաժանման, նպատակային օգտագործման և հաշվետվողականության սկզբունքներով: Հաճախորդների Միջոցները պահվում են Ընկերության սեփական միջոցներից առանձին, օգտագործվում են բացառապես հաճախորդի և/կամ Ընկերության անունից և Հաճախորդի և/կամ Շահառուի շահերից ելնելով, իսկ դրանց հաշվառումն ու վերահսկողությունը կազմակերպվում է համաձայն ներքին կանոնների և Կիրառելի օրենսդրության պահանջների:

4.2. Ընկերությունը Միջոցները կարող է հաշվառել Հաճախորդի անունով բացված հաշվին կամ Ընկերության անունով բացված արժեթղթերի կամ բանկային հաշվին՝ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված շրջանակներում: Հաճախորդը պետք է նախապես ծանոթացվի այդ հաշվառման եղանակների կիրառման դեպքում առաջացող ռիսկերին, այդ թվում՝ պահառուի կամ ֆինանսական կազմակերպության կողմից չկատարելու, տեխնիկական կամ իրավական սահմանափակումներից բխող հնարավոր կորստի, ինչպես նաև սեփականության իրավունքների սահմանափակ կիրառման ռիսկերին:

4.3. Ընկերությունը կարող է Հաճախորդի Միջոցները իր անունից գրավադրել կամ տրամադրել փոխառությամբ՝ բացառապես Հաճախորդի նախապես տրված գրավոր համաձայնությամբ և վերջինիս կողմից սահմանված պայմաններով: Հաճախորդը նախապես ծանուցվում է նաև այն մասին, որ պահառուն կամ այլ Գործընկեր կարող է Հաճախորդի Միջոցները հաշվառել որպես Հաճախորդի պարտավորությունների կատարումն ապահովող միջոց:

4.4. Այն դեպքերում, երբ Հաճախորդի Միջոցները փոխառությամբ տրամադրվում են կամ այլ կերպ օգտագործվում են ի շահ Ընկերության կամ այլ Հաճախորդի, Ընկերությունը պարտավորվում է՝

4.4.1. ստանալ Հաճախորդի նախնական գրավոր համաձայնությունը,

4.4.2. սահմանել և կիրառել վերահսկողության համապատասխան համակարգեր՝ օգտագործման պատշաճությունը ապահովելու համար,

4.4.3. իրականացնել հաշվառում և փաստաթղթավորում, որը հնարավորություն կտա հստակ նույնացնել օգտագործված Միջոցները, դրանց քանակը և օգտագործման պայմանները,

4.4.4. ապահովել Հաճախորդի իրավունքների և շահերի լիարժեք պաշտպանություն՝ Կիրառելի օրենսդրության սահմաններում:

4.5. Հաճախորդներին պատկանող Միջոցների հետ կապված Հաճախորդների շահերի պաշտպանության նպատակով Ընկերությունը պարտավոր է.

4.5.1. պահպանել տեղեկատվություն, վարել այնպիսի հաշվառում և հաշիվներ, որոնք թույլ կտան ցանկացած պահի և առանց ուշացման առանձնացնել յուրաքանչյուր Հաճախորդի Միջոցները այլ Հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներից,

WILCO

4.5.2. պահպանել տեղեկատվությունը և վարել հաշվառումն ու հաշիվներն այնպես, որ ապահովվի դրանց ճշգրտությունը և համապատասխանությունն իր տիրապետմանը և/կամ կառավարմանը հանձնված Հաճախորդների Միջոցներին,

4.5.3. պարբերաբար իրականացնել համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ առկա՝ Միջոցների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության, գրանցումների միջև, որոնց մոտ պահվում են Հաճախորդների Միջոցները,

4.5.4. ապահովել, որ Գործընկերոջ մոտ պահվող ցանկացած Հաճախորդի Միջոցները հնարավոր է առանձնացնել Ընկերությանը պատկանող միջոցներից, ինչպես նաև Գործընկերոջ միջոցներից՝ արժեթղթերի հաշիվների տարբեր անվանմամբ կամ պաշտպանության համարժեք մակարդակ ապահովող այլ միջոցներով: Սույն կետով սահմանված պահանջը չի տարածվում Ընկերության կողմից Հաճախորդին պատկանող պետական արժեթղթերը պետական պարտատոմսերի ենթապահառու հանդիսացող անձին փոխանցման դեպքի վրա, եթե պետական պարտատոմսերի ենթապահառուի մոտ Ընկերության և Հաճախորդների Միջոցների համար առանձին (տարբեր անվանմամբ) հաշիվների բացումն անհնար է,

4.5.5. ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպական միջոցներ Հաճախորդների Միջոցների անբարեխիղճ կամ չթույլատրված օգտագործման, մեքենայությունների, թերի հաշվառման կամ անտեսման արդյունքում Հաճախորդների Միջոցների կամ այդ Միջոցների հետ կապված իրավունքների կորստի ռիսկը կառավարելու համար:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՊԱՀԵԼԸ

5.1. Ընկերությունը իրավունք ունի Հաճախորդի արժեթղթերը պահել Հաճախորդի համար Գործընկերոջ մոտ բացված հաշվում (հաշիվներում): Գործընկերոջ ընտրության, նշանակման և Գործընկերոջ և տվյալ արժեթղթերի պահառության գործընթացների պարբերական ուսումնասիրության հարցում Ընկերությունը պետք է գործի բարեխղճորեն, լավագույն ջանքերի գործադրմամբ, բավարար ուշադրությամբ և հոգատարությամբ: Գործընկերոջ ընտրության և նշանակման գործընթացում Ընկերությունը պետք է հաշվի առնի Գործընկերոջ փորձառությունն ու համբավը, ինչպես նաև Հաճախորդի արժեթղթերի պահառությանը վերաբերող իրավական պահանջները և գործարար շրջանառության սովորույթները՝ Հաճախորդների իրավունքների վրա դրանց բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով:

5.2. Եթե Ընկերությունը նախատեսում է պահել Հաճախորդի արժեթղթերը Գործընկերոջ մոտ, որի երկրում առկա են առանձնահատուկ պահանջներ և վերահսկողություն այլ անձանց պատկանող արժեթղթերի պահառության նկատմամբ, ապա Ընկերությունն իրավունք չունի պահել Հաճախորդի արժեթղթերը տվյալ երկրում գործող այնպիսի անձի մոտ, որը ենթակա չէ նման պահանջների կամ վերահսկողության:

5.3. Ընկերությունն իրավունք չունի պահել Հաճախորդների արժեթղթերը այլ երկրում գտնվող Գործընկերոջ մոտ, որտեղ չի կարգավորվում այլ անձանց պատկանող

WILCO

արժեթղթերի պահառությունը, բացառությամբ՝ եթե առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

5.3.1. արժեթղթերի կամ դրանց հետ կապված ներդրումային ծառայությունների բնույթը պահանջում է, որ այդ արժեթղթերը պահվեն տվյալ երկրում գտնվող անձի մոտ,

5.3.2. արժեթղթերը պատկանում են Կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդին և այդ Հաճախորդը Ընկերությանը տվել է գրավոր ցուցում կամ համաձայնություն իր արժեթղթերը տվյալ երկրում գտնվող Գործընկերոջ մոտ պահելու վերաբերյալ:

6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

6.1. Ընկերությունը պարտավոր է ընդունված Միջոցները պահել իր սեփական միջոցներից առանձին՝ որևէ առևտրային բանկում բացված մեկ կամ մի քանի հաշիվներում:

6.2. Ընկերության անունից Հաճախորդների Դրամական միջոցների հաշվառման համար բացված բանկային հաշվի պայմանագիրը պետք է հստակ նշում պարունակի այն մասին, որ այդ բանկային հաշիվը նախատեսված է Ընկերության Հաճախորդների դրամական միջոցների հաշվառման համար:

6.3. Ընկերությունն իրականացնում է նաև Հաճախորդի Դրամական միջոցների առանձնացված ներքին հաշվառում:

6.4. Ընկերությունը Հաճախորդի դրամական միջոցները պահելու համար առևտրային բանկ ընտրելիս պետք է գործի բարեխղճորեն, բավարար ուշադրությամբ և հոգատարությամբ՝ ելնելով հաճախորդի լավագույն շահերից: Ընկերությունը պետք է հաշվի առնի նման առևտրային բանկի փորձը և համբավը, վարկանիշը, ինչպես նաև Հաճախորդների դրամական միջոցների պահպանության հետ կապված իրավական պահանջները և շուկայական պրակտիկան՝ հաճախորդների իրավունքների անհրաժեշտ պաշտպանությունն ապահովելու և հաճախորդների իրավունքների վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով: Ընդ որում, եթե Ընկերությունը հաճախորդի դրամական միջոցները պահելու համար ընտրում է արտասահմանյան բանկ, ապա ներդրումային ընկերությունը պետք է ստանա Հաճախորդի գրավոր համաձայնությունը միջոցները տվյալ բանկում պահելու համար, բացառությամբ՝ եթե ընտրված արտասահմանյան բանկի վարկանիշը ցածր չէ Ստանդարտ և Փուրգի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-», Մուդիգի «Բաա» խմբի՝ «Բաա3», Ա.Մ. Բեստի «Բ» խմբի՝ «Բ+», Դաֆֆ և Ֆելփի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-», Վեիսսի «Բ» խմբի՝ «Բ-» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ-» վարկանիշից:

7. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

7.1. Ընկերությանը արգելվում է իրականացնել արժեթղթերով ֆինանսավորման գործարքներ Հաճախորդին պատկանող արժեթղթերով կամ այլ կերպ օգտագործել այդ արժեթղթերն ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների, բացառությամբ սույն գլխի 7.2 և 7.3. կետերով նախատեսված դեպքերի:

WILCO

7.2. Ընկերությունը կարող է օգտագործել Հաճախորդի արժեթղթերը միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

7.2.1. Հաճախորդը նախապես տվել է իր գրավոր համաձայնությունը արժեթղթերի օգտագործման համար՝ մատնանշելով օգտագործման պայմանները: Նման համաձայնությունը կարող է պարունակվել Հաճախորդի հետ կնքվող Պայմանագրում,

7.2.2. Հաճախորդի արժեթղթերի օգտագործումը պետք է սահմանափակվի միայն Հաճախորդի կողմից մատնանշված պայմաններով:

7.3. Ընկերությունը կարող է Գործընկերոջ մոտ բացված ամփոփ հաշվում կամ նմանատիպ այլ հաշվում պահվող՝ Հաճախորդին պատկանող արժեթղթերով իրականացնել արժեթղթերով ֆինանսավորման գործարքներ կամ այլ կերպ օգտագործել կամ տիրապետել Գործընկերոջ մոտ բացված ամփոփ հաշվում կամ նմանատիպ այլ հաշվում պահվող Հաճախորդի արժեթղթերն ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների, եթե բավարարված են սույն գլխի 7.2. կետում նշված պայմանները և Ընկերությունն ունի հսկողության համապատասխան համակարգ, որն ապահովում է, որ միայն սույն գլխի 7.2.1 կետի համաձայն իրենց համաձայնությունը տված Հաճախորդների արժեթղթերն են սույն գլխի 7.2. և 7.3. կետերով նախատեսված ձևով օգտագործվում:

7.4. Ընկերությունը պետք է վարի համապատասխան հաշվառում և գրանցումներ այն Հաճախորդների վերաբերյալ, որոնց արժեթղթերն օգտագործվել են իրենց համաձայնությամբ և իրենց մատնանշած պայմաններով, ինչպես նաև յուրաքանչյուր Հաճախորդի գծով օգտագործված արժեթղթերի քանակի վերաբերյալ: